№ 188 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ՕԳՈՍՏՈՍԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ՕԳՈՍՏՈՍԻ № 188

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

Նատալիա Մելիքեան, Արշակ և Բէգլար Ամիրջանեանները՝ ամուսիններով՝ խորին վշտով յայտնում են ազգականներին ու ծանօթներին իրանց թանգագին մօր և սկեսրոջ

ԵՓԵՄԻԱ ԱՄԻՐՋԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ օգոստոսի 25-ի գիշերը։ Հոգեհանգիստը շաբաթ, օգոստոսի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը կիրակի, օգոստոսի 30-ին, առաւօտեան ժամը 10 ին, բնակարանից (Միխայլովսկի պր. № 23) դէպի Կաթուղիկէ ս. Գէորգ եկեղեցին (Մէյդանի)։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Խնդրվում է դագաղի վրա պսակներ ու ծաղիկներ չը դնել, այլ այդ գումարը յատկացնել յօգուտ փախստականների։ (կ.) 592. 2—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խուդադեան Ապաստարանում բացվել են մի քանի տեղեր, ուր ընդունվելու են սանուհիներ ձրիաբար հետեւեալ պայմաններով.

1) Չքաւոր ընտանիքների աղջիկներ, հայաբնակ բոլոր վայրերից։

2) Հայոց եկեղեցական ծխական ոչ պակաս քան միդասեան և ոչ աւել քան երկդասեան դպրոցաւարտները։

3) Ընտրվում են միայն ամենաառաջադէմները և առողջակազմները։

4) Որոնք ընդունված կը լինեն տեղիս Յովհաննեան կամ Գայեանեան դպրոցներից մէկում։

5) Համահաւասար պայմաններում Թիֆլիսաբնակների հետ, գերադասութիւն կը տրվեն գաւառաբնակներին։

Ցանկացողները պէտք է խնդիր ներկայացնեն խորհրդի անունով ներկայացնելով ծննդեան, ծաղկի պատուաստման, բժշկական, դպրոցի աւարտման և չքաւորութեան վկայականներ։ Հասցէն՝ Թիֆլիս, Աբաս-Աբաթեան հրապարակ № 7. առ. (օ.մ.) 580. 2—2

ԴՊՐՈՑ ՊԱՆՍԻՈՆ եւ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(19-րդ տարի)

Ընդունվում և պատրաստվում են տղաներ ու աղջիկներ՝ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ուսումը սեպտեմբերի 1-ից։ Բեբուտովսկայա, № 4 և 5.
առ. (հ. կ. ե.) 571. 4—3

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

(Պետ. Հեռ. Գործ.)

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Բարձրագոյն ռեսկրիպտ, յանուն Գերագոյն Զօրահրամանատար Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչի։

Ձերդ Կայսերական Բարձրութիւն։ Պատերազմական գործողութիւնների սկսվելու հետեւանքով, համապետական բնոյթ ունեցող պատճառներն Ինձ հնարաւորութիւն չը տուին Իմ հոգու ձգտմանը՝ իսկոյն և եթ անձամբ կանգնել բանակի գլուխ, ուստի ցամաքային և ծովային բոլոր ոյժերի բարձրագոյն հրամանատարութիւնը յանձնեցի Ձերդ Կայսերական Բարձրութեան։ Ամբողջ Ռուսաստանի աչքի առաջ Ձերդ Կայսերական Բարձրութիւնը ցոյց տուեց անսասան քաջութիւն՝ առաջ բերելով Իմ և բոլոր ռուս մարդկանց կողմից խորին վստահութիւն և մաղթանքներ, որոնք անդաւաճան կերպով ուղեկցում էին Ձեր անունը՝ ռազմական անխուսափելի փորձութիւնների ժամանակ։

Բարձրից Ինձ յանձնված հայրենիքի արքայական ծառայութիւնը հրամայում է Ինձ այժմ, երբ թշնամին մեր կայսրութեան սահմանները խորն է մտել, յանձն առնել Բարձրագոյն հրամանատարութիւնը գործող զօրքերի և բաժանել Իմ բանակի ռազմական նեղութիւնները և նրա հետ միասին փորձանքից պաշտպանել ռուսական երկիրը։

Աստուծոյ գործերն անիմանալի են, բայց Իմ պարտքը և ցանկութիւնն ամրապնդում են Ինձ այդ որոշման մէջ՝ պետական օգտակարութեան նկատումներով։

Թշնամու ուժեղացած գրոհը արեւմտեան զօրաճակատից՝ առաջադրում է սերտօրէն կենտրոնացնել բոլոր զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները, նաև միացնել ռազմական հրամանատարութիւնը պետութեան կառավարական բոլոր մասերի հետ, այդպիսով ուշադրութիւնը գրաւելով մեր հարաւային ռազմաբեմից։

Հանգամանքների դասաւորութեան շնորհիւ ընդունելով անհրաժեշտութիւնը Ձեր օգնութեան և խորհուրդների՝ մեր հարաւային ռազմաբեմի վերաբերեալ, Ձերդ Կայսերական Բարձրութեանը նշանակում եմ Իմ փոխարքան Կովկասում և գլխաւոր հրամանատարը կովկասեան քաջարի բանակի, արտայայտելով Ձերդ Կայսերական Բարձրութեան՝ Ձեր բոլոր ռազմական աշխատանքների համար՝ Իմ և հայրենիքի խորին շնորհակալութիւնը։

Մնամ դէպի Ձեզ անփոփոխ բարեհաճ՝

Իսկականի վրա Նորին Մեծութեան ձեռքով գրված է՝

Եւ Ձեզ անկեղծօրէն և սրտագին սիրող՝

«ՆԻԿՈԼԱՅ»

Կայան, 23 օգոստ. 1915 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

I

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Հրաման Զօրաբանակին և Նաւատորմին օգոստ. 23-ին 1915 թ.։

Սոյն թւից Ես Ինձ վրա վերցրի ցամաքային և ծովային բոլոր զինված ոյժերի ղեկավարութիւնը, որոնք գտնվում են ռազմական գործողութիւնների բեմում։ Հաստատ հաւատով դէպի Աստուծոյ ողորմածութիւնը և անսասան վստահութեամբ դէպի վերջնական յաղթանակը կատարենք հայրենիքի պաշտպանութեան մեր սրբազան պարտականութիւնը մինչև վերջը և ամօթահար չը թողնենք ռուսական երկիրը։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է՝

ՆԻԿՈԼԱՅ

Կայան

II

Պանծալի բանակ և Նաւատորմ, այսօրվանից ձեզ առաջնորդում է Ինքը վերին Հրամանատար Ինքնակալ Թագաւոր Կայսրը։ Խոնարհվում եմ մի տարուց աւելի ձեր ցոյց տուած հերոսութեան առջև. յղում եմ ձեզ իմ սրտագին և հոգեկան ջերմ շնորհակալութիւնները։ Հաստատ հաւատացած եմ, որ իմանալով թէ Ինքը Թագաւորն է ձեզ առաջնորդում, Որին երդում էք տուել, դուք ցոյց կը տաք մինչև այժմ չը տեսնված քաջագործութիւններ և որ դրանով ցոյց կը տաք ձեր Օծեալին ամենազօր մի օգնութիւն, որ յաղթութիւն է պարգևում։

Ստորագրեց՝ գեներալ ադիւտանտ Նիկոլայ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՄ

—o—

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 23-ին և 24-ին ծովամերձ շրջանում հրաձգութիւն էր

Օլթիի ուղղութեամբ մեր հետախոյզ զօրախմբերը ետ մղեցին թուրքերին Արկինսի մօտ և Ախի շրջանում։

Մանազկերտի ուղղութեամբ, Մէջիգլուի շրջանում մեր զօրամասերն ընդհարումներ են ունենում թուրքերի զօրախմբերի դէմ։

Մնացած զօրաճակատում ռազմական ընդհարումներ չեղան։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՍՈԼՈՒՆ.—Միտիլէնից հաղորդում են, որ օգ. 23-ին կատաղի կռիւներ էին տեղի ունենում Գալիպոլի թերակղզու ամբողջ երկարութեամբ։ Դաշնակից զօրքերն աջողութիւն ունեցան մի քանի կէտերում։ Սուվլի մօտ շրջապատված թուրքերի մի գումարտակ շուտով անձնատուր է լինելու։

Շարունակ գալիս են նոր զօրագնդեր ֆրանսիական և անգլիական շոգենաւերով։

Երեք յածանաւ եռանդով ռմբակոծում էին Կրետիայի գագաթները։

Մուդրոսից տեղեկացնում են, որ դաշնակից նաւատորմի ծովակալը հաղորդել է, թէ անգլիական մի ականանաւ Զմիւռնիայի մօտ ձեռք է ձգել թուրքական մի առագաստանաւ 2 թուրք օֆիցերով և 7 ունտէր-օֆիցերով, որոնք մեկնում էին Լիբանան՝ իտալացիների դէմ ապստամբութիւն կազմակերպելու համար։ Առագաստանաւի մէջ կատարված խուզարկութիւնը երևան հանեց 150,000 դրախմ, որ տրվելու էր պրոպագանդայի համար։ Նաւը և օֆիցերներին բերել են Մալտա։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ՍՈԼՈՒՆ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ վերջերս թուրքերի մէջ երևան է եկել շարժում գերմանացի օֆիցերների դէմ։ Հինգ թուրք փաշա բանտ են դրված իբրև այդ շարժման պարագլուխներ, որ ուղղված է գերմանական դեսպան իշխան Հօհենլօէի դէմ։

ԱԹԷՆՔ.—Անցեալ շաբաթ անգլիական մի սուզանաւ ջրասուզեց Մաքրիքէօյի մօտ գերմանական 25 նաւակ, որոնք բեռնված էին ռազմամթերքով, նաև թուրքաց մի հակաականանաւ, որ ուղեկցում էր յիշեալ նաւակներին։ Այդ առիթով, ինչպէս և Կ. Պոլսի ծովափի վրա գործված յարձակումների պատճառով, սուլթանը ցանկութիւն է յայտնել հեռանալ Դոլմա Բախչէի պալատից։ Ուրիշ պալատ չը լինելու պատճառով և նկատի առնելով, որ Իլդըզ-Քիօշքը ամրացված է, թուրքաց կառավարութիւնը պալատի է վերածում ծովային մինիստրութեան շինութիւնը։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Սեփ. Թղթակցից)

Էջմիածին, 23 օգոստոսի

Այստեղ ստացված հաստատ տեղեկութիւնները յայտնում են, որ Հայաստանի ջնջումը և Հայաստանը առանց հայերի թողնելու սիստեմը շատ խիստ կերպով իրագործվում է։ Օրդուի, Թոքատի, Մարզուանի, Ամասիայի, Սեվազի (Փոքր Հայք) հայ ժողովուրդը կոտորածից ազատվելու համար ընդունել է մահմեդականութիւն գերմանացիների խորհրդով, սակայն այդ ուրացութիւնն էլ չէ փրկել նրան. Թուրքերը կոտորել են 14 տարեկանից վեր բոլոր տղամարդկանց և կանանց և միայն դրանցից փոքրահասակներին վերցրել են ու թլփատելով պահել։ Մի մասն էլ ժողովրդի՝ քշել են դէպի Եփրատ գետը և թափել այնտեղ։ Խեղդվածների թիւն այնքան մեծ է եղել, որ Եփրատ գետը փոխել է իր ընթացքը։ Մի մասն էլ ժողովրդի քշել են Միջագետք, գերմանացիների պահանջով, բայց ճանապարհին կոտորել են նրանց, իսկ որոնք չեն կոտորված, արդէն կլիմայից ջնջվում են։

Սասունից մազապուրծ փախչելով եկել են մի քանի հոգի. պատմում են, որ հայերը կռւում են մի քանի ամիսներից ի վեր, բայց շատ քիչ հրացան և փամփուշտ ունեն։ Նրանք կարողացել են սպանել թուրքերից մօտ 500—600 հոգի և վերցնել նրանց հրացանները։ Սակայն կռւողները դժուար թէ կարողանան դիմանալ և Սասունը վերջնականապէս ջնջվելու վտանգին է ենթարկված։

Հայաստանը առանց հայերի թողնելու սիստեմը զուր տեղն են հերքում որոշ մարդիկ. նա շատ խստութեամբ իրագործվում է *)։

---

*) Այն անձինք և թերթերը, որոնք յանդիմանեցին «Մշակին», թէ ինչու գուժում է «Հայաստանը առանց հայերի» մնալը, այսօր իրանք են ստիպված աղաղակ բարձրացնել խոստովանելով «Մշակի» ասածը Հայաստանի մասին. այժմ քարոզում են միայն թէ «կռւով մեռնենք»։ . . . .

. . . .

Ծանօթ. խմբ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի ծոցում փոփոխութիւն չը կայ։

Ֆրիդրիխշտադտից դէպի հարաւ օգոստոսի 24-ի գիշերվանից սկսվեցին հակառակորդի եռանդուն յարձակումները Լաուցա գետի վրա։ Գիշերային յարձակումները մենք վանեցինք։

Դվինսկի և Սվէնցեանի մօտից դէպի արեւմուտք ոչինչ էական բան տեղի չունեցաւ։ Սվէնտայի և Վիլի միջև և Վիլիա-Նեմանի միջև դրութիւնը նախկինն է։ Գերմանացիների յարձակումները օգոս. 24-ի ցերեկով Օրանի աւանի և Մերէչանկա գետի ստորին հոսանքի մօտ մենք վանեցինք։ Միջին Նէմանում հակառակորդը շարունակեց օգոստոսի 23-ին և 24-ին զարգացնել իր գործողութիւնները Գրոդնոյի մօտից արեւելեան և հարաւ-արեւելեան ուղղութեամբ և ապա դէպի հարաւ. օգոստ. 24-ի առաւօտից մեր վերջապահ զօրագնդերը առանձնապէս յամառ կռիւների դիմադրեցին Վոլկովիսկայի շրջանում և դէպի հարաւ մինչև Պրուժանի-Սլոնիմ խճուղին։ Ռասէյղէի և Պինայի միջև, Խոմսկ-Դրոգոչինին զօրագծի վրա տեղի ունեցած կռիւներից յետոյ, մենք շարունակում ենք դիմադրել հակառակորդի առաջխաղացմանը։

Կովել-Սարնա երկաթուղային շրջանում մեր հեծելազօրն աջողութեամբ գործում էր թշնամու դէմ, ձեռնարկելով մի քանի խիզախ յարձակումներ. նրանցից անհամեմատ աջող էին Վոլոշկի գիւղի մօտ՝ Կովէլից շրջանում և Կոլկի չէնի մօտ, ուր մենք գերեցինք 3 օֆիցեր և 150 զինուոր։

Վերին Ստիրի աջ ափում օգոստոսի 24-ի առաւօտից սկսվեցին յամառ կռիւներ Ռաձիվիլովի շրջանում, Սլոնեվկա և Իկվա գետերի միջև։ Թւով անհամեմատ գերազանց թշնամու ոյժերի գրոհի տակ մեր զօրքերին հրամայված է գրաւել աւելի ուժեղ դիրքեր Գորինի, Ստուբէլի և Իկվա գետերի ուղղութեամբ։ Սերէտում թշնամին, մնալով ընդհանուր առմամբ պասսիվ, օգոստ. 24-ին ձեռնարկեց բազմաթիւ, բայց ապարդիւն փորձերի առաջանալու Տարնոպոլի շրջանում։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Երեկ. պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտիլերիական կռիւները շարունակվում են ամբողջ զօրաճակատի վրա։ Մեր հրետանիները Արրասից դէպի հիւսիս մեծ աւերումներ գործեցին գերմանական խրամատներում։ Բաւական ուժեղ թնդանօթային կռիւ էր տեղի ունենում Ռուայի շրջանում, Շամպանում, Պէրտ-Բօսէժուր ռազմաճակատի վրա, Ապրէմոնի անտառում և Սիրէից դէպի հիւսիս։ Ռումբերի օգնութեամբ կռիւ էր Վոգէզներում, Շրացմենելէում և Հարդմանս-Վէյլէրկոպֆում։

Ինչպէս արդէն հաղորդվեց, օգոստոսի 19-ին 4 գերմանացի օդագնաց ռմբակոծեցին Լիւնէվիլ քաղաքը, ուր ոչ մի զինուորական շէնք չը կայ։ Թշնամին անօրինակ ոգևորութեամբ իր ռումբերը ուղղում էր ամենաբանուկ թաղամասերի վրա, այն էլ առաւօտի ժամերին, որի պատճառով էլ, դժբաղդաբար, զոհերի թիւը մեծ եղաւ, մանաւանդ կանանցից և երեխաներից։ Իբրև վրէժ մեր օդագնացներից 40 հոգի ռմբակոծեցին Սաարբրիւկէնի զինուորական շէնքերը, գործարանները և կայարանը։ Օդագնացները վկայում են, որ հետևանքները դրական են։

Գերմանական մի աէրօպլան ստիպված էր իջնել Կալէում. օդագնացները գերվեցին։

Թշնամու օդագնացները նետեցին Սէն-Դիէում մի քանի ռումբ, որոնցից ոչ մի վնաս կամ կորուստ չեղաւ։

ՊԱՐԻԶ.—Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

Գիշերվայ ընթացքում տեղի էին ունենում արտիլերիական կռիւներ ձեռքի ռումբերի օգնութեամբ Սուշէի և Նէվիլի շուրջը։ Թշնամին Արրասից դէպի հարաւ և Ռուայում ենթարկեց մեր դիրքերը կատաղի ռմբակոծութեան, որին մեր հրետանիներն աջողութեամբ պատասխանում էին։ Թնդանօթաձգութիւն էր նաև Շամպանում, Բօսէժուրի մօտ և Վոգէզներում։

Գերմանացի օդագնացները երէկ և այսօր առաւօտ թռիչքներ կատարեցին Ժէրարմէրի վրա և նետեցին մի քանի ռումբ. սպանվեցին 2 հոգի։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Փոքրաթիւ զօրամասերի ընդհարումներ տեղի էին ունենում Սարինօ և Աղիժա և Սուգանա հովիտներում։ Թշնամին ամենուրեք ստիպված էր նահանջել կորուստներով։ Ռէդիվալդի լանջում մենք աւերեցինք մի ամրութիւն, որի մէջ ձեռք ձգեցինք շատ ռազմանիւթ։

Պարսօյում մենք մի քանի տեղ առաջացանք և գրաւեցինք թշնամու մի քանի ամրութիւն. մեր աջողութիւնները առանձնապէս մեծ են Դոբէրտօ շրջանում. Սէյբուսիի շրջանում մենք օգոստոսի 20-ից ձեռք ձգեցինք 150 հրացան, մի քանի հազար փամփուշտ և ուրիշ ռազմանիւթ։

Թշնամին մի քանի օր շարունակ թռուցիկներ էր ցրում, յորդորելով մեր զինուորներին դասալիք լինել, իսկ պատերազմական ծանուցումները հրապարակում է ամենակոպիտ խեղաթիւրումներով։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Մեր հետախոյզ զօրամասերի ընդհարումներից հակառակորդը նահանջում է։ Օգոստ. 22 ին Մարկօյի մօտ տեղի ունեցան խոշոր ընդհարումներ, որոնց ժամանակ մենք ոչնչացրինք մի քանի խրամատ։

Մեր զօրքերը Պլէցցօ աւազանում փախուստի դարձրին թշնամու զօրամասերին և գրաւեցին նրանց դիրքերն ու ռազմանիւթերը։ Իզօնցօ գետի վերին հոսանքում մեր զօրամասերից մինը յարձակում գործեց անտառը գրաւած զօրամասի վրա, վանեց նրան անտառից և յետոյ ինքը ամրացաւ այնտեղ։

Թշնամու օդագնացները փորձում են անակնկալ թռիչքներ կատարել. մեր մարտկոցների կրակը և օդագնացների հետապնդումը ստիպում են նրանց իսկոյն հեռանալ։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՆԻՇ.—«Պրէսս Բիւրօն» հաղորդում է. Լոյս օգոստոսի 19-ի գիշերը թշնամին փորձեց 2 նաւակով անցնել Դրինան Ստօյչէվօբրօդոյի ուղղութեամբ. մեր զօրքերը կրակեցին և ջրասուզեցին թշնամու նաւակները։ Միեւնոյն գիշեր թշնամու երկու ուրիշ նաւակ փորձեցին անցնել Դրինան Բուդէչէչի ուղղութեամբ, Զվօրնիկից դէպի հարաւ, բայց վերադարձան, հազիւ հասնելով գետի կէսին։

Օգոստոսի 21-ին մենք խանգարեցինք թշնամուն շարունակելու բերդակառուցման աշխատանքները Դունայի զօրաճակատում Դիվէչի ուղղութեամբ և Սավա գետի ռազմաճակատի վրա՝ Օստրուժնիցայի դիմաց։ Օգ. 22-ին Դունայի ռազմաճակատի վրա մեր արտիլերիան արձակեց երկու ռումբ թշնամու մի նաւի վրա, որ զինուորներ էր փոխադրում։ Միեւնոյն օրը մենք արգելք եղանք բերդային աշխատանքներին Դունայի ձախ ափին։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 օգոստոսի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից պաշտօնապէս հաղորդվում է, որ «Ս. 27» սուզանաւը չէ վերադարձել Վիլհէլմսհաֆէն օգոստոսի սկզբից, ուստի և նա համարվում է կորած։

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՐԿՐԱՊԱՀ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Օրէնք հրատարակվից, վերաբերեալ 2-րդ կարգի երկրապահ զինուորներին ծառայութեան կոչելու կարգը փոփոխելուն։

I) Ի փոփոխումն և ի լրացումն զինուորական ծառայութեան կանոնադրութեան 410-րդ, 427-րդ, 437-րդ և 441-րդ յօդուածների, ներկայ պատերազմի ժամանակ սահմանել.

1) 2-րդ կարգի երկրապահ զինուորները նշանակվում են թէ իբրեւ այդպիսիներ և թէ մշտական զօրքերի կազմը լրացնելու և ուժեղացնելու համար։

2) 2-րդ կարգի երկրապահ զինուորներին ծառայութեան կոչելու անհրաժեշտութիւնը ազդարարվում է Թագաւոր Կայսրի Բարձրագոյն հրովարտակով։

3) Որոշված ժամանակամիջոցում ծառայութեան կոչվելիք երկրապահ զինուորների հասակները և այն վայրերը, որտեղից նրանք կանչվում են, յայտարարվում են յանուն կառավարիչ սենատի տրվող Բարձրագոյն հրամաններով. 2-րդ կարգի երկրապահների ընդհանուր թիւը, որ հարկ է կոչել ծառայութեան, և նրանց ըստ նահանգների և գաւառների բաժանելը որոշվում են յատուկ ցուցակով, որ կազմելու է զինուորական մինիստրութիւնը ներքին գործերի մինիստրի հետ համաձայնութեան գալով, որպիսի ցուցակը հաւանութիւն է գտնելու Բարձրագոյն իշխանութեամբ։

4) 2-րդ կարգի երկրապահներին տալ ժամանակ իրանց ընտանեկան գործերը անօրինելու համար 3 ամբողջ օր, հաշուելով տեղերում նրանց ծառայութեան կոչելու ազդերը փակցնելու ժամանակից, որից յետոյ նրանք պարտաւոր են ներկայանալ որոշված տեղերում այդ ազդերի մէջ մատնանշված ժամանակամիջոցում։

II) Զինուորական ծառայութեան կանոնադրութեան 428-րդ, 429-րդ, 432-րդ, 434-րդ, 436-րդ, 438-րդ, 439-րդ, 462-րդ, 464 րդ, 471-րդ յօդուածների գործողութիւնը տարածել նաև 2-րդ կարգի երկրապահ զինուորների վրա։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ԼՈՆԴՈՆ.—Բրիստոլում կայացած տրէդ-ունիօնիստների կոնգրէսում համայնքների պալատի անդամ Սէդդէնը յայտնեց, որ անգլիական աշխատաւոր դասակարգերը համոզված են, թէ անհրաժեշտ է ոչնչացնել միլիտարիզմը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ։ (Ուշացած).—Ստոյգ չէ երեկոյեան լրագիրներից մէկում լոյս տեսած այն տեղեկութիւնը, թէ սերբիական մինիստրների խորհրդի նախագահը պատասխանել է քառեակ համաձայնութեան պետութիւններին։

Բարձրագոյնս թոյլատրվեց մեզ թշնամի պետութիւնների սլաւոն ծագում ունեցող հպատակ բժիշկ-փախստականներին զբաղվել բժշկութեամբ։

Մինիստրների խորհուրդը հաւանութիւն տուեց ներքին գործերի մինիստրի նախագծին, որի համաձայն պատերազմի վտանգաւոր վայրերից կառավարական հաստատութիւնների հետ փոխադրվելու են նաև հաստատութիւնները։

Մինիստրների խորհուրդը յատկացրեց հարաւ-արեւմտեան կոմիտէտին հիւանդ ու վիրաւոր զօրականներին խնամելու համար 360,000 ռ., Պօդօլի զէմստվոյին կոմիտէտին 367,000 ռ., Կարմիր Խաչի ընկերութեանը նպաստ 4.357,900 ռ., Պետրօգրադի քաղաքային ինքնավարութեանը 1.649,000 ռուբլի։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Աւստրիական դեսպան Դումբի այն խոստովանութիւնը, թէ նա յանձնեց Ֆալմութում ձերբակալված ամերիկացի թղթակցին նամակ՝ աւստրիական արտաքին գործերի մինիստրի համար այն միջոցների մասին, որոնցով գործարաններին արգելվելու է ռազմամթերք մատակարարել դաշնակիցներին, չափազանց յուզել է հասարակական կարծիքը։ Նիւ-Եօրկի հասարակութիւնը պահանջում է, որպէսզի դեսպանին վերադարձնվի անցագիրը։

ԿԻԵՎ.—Թղթի պակասութեան պատճառով լրագիրները լոյս են տեսնում կրճատված չափով։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ ընկերական լեհ նախկին պատգամաւոր Կուլերսկին հեռագրով դիմեց րէյխս կանցլէրին, բողոքելով որ մինչ լեհերը կռւում են զօրքերի մէջ գերմանական շահերի համար, լեհերին ճնշում են սոսկ նրա համար որ խօսում են լեհերէն։ Կուլերսկին խնդրեց հրատարակել կառավարական բացատրութիւն այն մասին, որ լեհ ազգաբնակութիւնը հանդիսանում է գերմանացիների հետ իրաւահաւասար և լեհ լեզուն ազատ է։ Այդ բողոքի առիթով ստատս-սեկրէտարներից մինը պատասխանեց, որ ոչ հասարակ անպատեհութիւններ են ծագում մայրենի լեզուի գործածութեան առիթով։ Գերմանիայի լեհական մամուլը գոհ չէ այդ պատասխանից։

Բեռլինից յայտնում են, որ Գերմանիայի ազգաբնակութիւնը պաշտօնապէս իրազէկ է եղած, թէ ցանկալի չէ տեղեկութիւններ տալ օրաթերթերին, անգամ Գերմանիայում բնակվողներին, գերմանական արդիւնաբերութեան դրութեան մասին։

ՀՌՈՄ.—Գեներալ Ժոֆֆրը եկաւ Իտալիա՝ թագաւորին ներկայանալու և գեներալ Կադօրնայի հետ ծանօթանալու համար։ Թագաւորը Ժոֆֆրին շնորհեց Սավօյայի զինուորական շքանշանի մեծ խաչը։ Ժոֆֆրը երկու օր շարունակ մնաց գլխաւոր բանակում և այցելեց մի քանի աւելի բնորոշ սահմանակէտերը։

ՓԱՐԻԶ.—Գեներալ Ժոֆֆրը վերադարձաւ և ուղարկեց Կադօրնային շնորհակալական հեռագիր սրտագին ընդունելութեան համար, խնդրելով հաղորդել թագաւորին, որ ինքը բախտաւոր է, որ հնարաւորութիւն ունեցաւ մի քանի ժամ անցնել հոյակապ իտալական զօրքերի հետ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ԹԵՀՐԱՆ.—Տեղիս գերմանացիք և նրանց կողմնակիցները չեն թագցնում, որ իրանք մտադիր են, Քիրմանշահի օրինակով, հեռացնել տալ անգլիական և ռուսական հիւպատոսներին նաև Սպահանից, ուր դրութիւնը օր-աւուր դառնում է աւելի ու աւելի յուզալի։ Իրօք, թէև գերմանացիներին աջողվում է առանձին բանի գործողութիւններ մեր դէմ, սակայն ընդհանուր կացութիւնը Պարսկաստանում Գերմանիայի չէ աւետում մեծ աջողութիւններ, որոնք ստիպէին Անգլիային և Ռուսաստանին խոշոր թիւ զօրքեր ուղարկել Պարսկաստան։

Մեծ բրիտանական դեսպանը մերժեց ընդունել պարսկական արտաքին գործերի մինիստրին, որ եկել էր ներողութիւն խնդրելու Սպահանի անգլիական հիւպատոսի վրա տեղի ունեցած յարձակման և նրան վերջ հասցնելու առիթով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Լոնդոնից Պետրօգրադ փոխադրվեց 135,000 ռուբլի, որպիսի գումարը հանգանակվեց «Ռուսական դրօշակի» երկրորդ օրը։

◆ «Кіевлянинъ»-ը գրում է. «Ընդունելով, որ մեր ռազմական դրութեան նկատումներով, ի նկատի ունենալով միւս զօրաճակատների կացութիւնը, ժամանակաւորապէս զիջելու ենք հարաւ-արեւմտեան երկիրը, անգամ Կիեւը, յիշեցնում ենք սակայն, որ Ռօվնօ գտնվում է Կիեւից 311 վերստ հեռաւորութեան վրա։ Այդ տարածութիւնը նոյնիսկ մեծ արագութեամբ չի կարելի անցնել $1^1/_2$—2 ամսից ոչ շուտ։ Հարկաւոր է, չը կորցնելով ժամանակ, կանոնաւոր կերպով դատարկել քաղաքը»։

◆ Մոսկվայից Կովկաս է ճանապարհվել մի գնացք, որով բերվում են ընծաներ կովկասեան զօրքի համար։

◆ Րիգայում երեք կողմից լսելի է թնդանօթաձգութիւն։

◆ Դվինսկ քաղաքը դատարկելու գործողութիւնները շարունակվում են մեծ եռանդով։

◆ Լուրերի համաձայն, պապի ցանկութեամբ նրա ընտրութեան տարեդարձի առիթով կայանալիք տօնակատարութիւնը յետաձգվում է մինչև նոյեմբեր, ի նկատի ունենալով այն տուեալները, թէ մինչև այդ ժամանակ կը կայացվի զինադադար կամ, գուցէ, նոյնիսկ հաշտութիւն։

◆ Կօստրօմայի համանահանգական կօօպերատիվ համագումարը որոշել է հեռագիր ուղարկել Րօձեանկօյին այն մասին, թէ ազգաբնակութեան՝ հայրենիքին օգնելու փորձերը — պետական ինքնապաշտպանութեան գործում—հանդիպում են արգելքի իշխանութեան մարմինների կողմից։ Աջող ինքնապաշտպանութիւնը անկարելի է առանց փոխարինելու ներկայ մինիստրութիւնը՝ երկրի վստահութիւնը վայելող այլ մինիստրութեամբ։

◆ Անգլիան որոշել է իր զօրքերի թիւը հասցնել 5 միլիօն մարդու։

◆ Վերջին ժամանակներս Շվէյցարիայում ապրող թիւրքահպատակ հայերը դիմումներ են անում Շվէյցարիայի ռուսական դեսպանին, առաջարկելով իրանց ծառայութիւնը, որպէս բժիշկներ և սանիտարներ։ Դեսպանը այդ առիթով մի հարցապնդումով դիմել է արտաքին գործերի մինիստրին։

◆ «Ռ. Ս.» թղթակիցը Բուխարէստից հեռագրում է. «Ռումինիան պարտաւորվել է դաշնակիցների առաջ հանդէս գալ սեպտեմբերի կէսերին։ Այդ տեղեկութիւնը սարսափ է ազդել Բեռլինի շրջաններում»։

◆ Խաղաղութեան Ընկերութեան 43 պատգամաւոր մեկնել են Ամստերդամ և Ամերիկա՝ խնդրելու Վիլսոնին յանձն առնել հաշտեցնողի դեր։

◆ Մինսկի նահանգապետը յայտարարել է, թէ ոչ ոքից ստիպողաբար չի պահանջվի հեռանալ քաղաքից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՎԱՆԻ ՏԱՌԱՊԵԱԼՆԵՐԻ

Ստացել ենք. 1) Սուխումից, Մանուկ Գաբրիէլեանի միջոցով՝ սրճարանում հանգանակված 31 ռ., 2) Սամարղանդից, Գաղթականից 10 ռ., 3) Թերմէզից, Խ. Յովհաննիսեանից 47 ռ. 38 կ., 4) Կօնստանտինօվկա աւանից Ալէքսան Ներսէսեանից, իր տանը խնճոյքին հանգանակված 13 ռ. (նուիրել են Ա. Ներսէսեան 5 ռ., Մն. Գրիգորեան և Ա. Օհանեան 3-ական ռ., Գաբրիէլ Սահակեան 2 ռ.), գումարն է 101 ռ. 38 կ., նախկին ստացված 86 ռ. 50 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 154) ստացել ենք ընդամենը 187 ռ. 88 կոպէկ։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացել ենք 1) Թիֆլիսում, Մ. Ա. Ղալթաղչեանի միջոցով, ծանօթների շրջանում հաւաքված 74 ռ. 50 կ., 2) Թիֆլիսում, Աստուածատուր Մաղաթեանից 1000 ռ., 3) Մերվից, Միքայէլ Ոսկանեանցի միջոցով, Արշակ ք. Տէր-Ոսկանեանցի տանը կայացած խնճոյքի ժամանակ, հիւրերից հաւաքված 100 ռ., 4) Մերվից, Միքայէլ Ոսկանեանցի միջոցով, Ալ. ք. Պապովեանի տանը կայացած խնճոյքի ժամանակ, հիւրերից 27 ռ., 5) Ջիւլէ կայարանից, Սարգիս Ոսկանեանի միջոցով հաւաքված տեղում, յանձնելի Նպաստ. Ընկ. (ցուցակը կը տպվի) 39 ռ. 25 կ., 6) Սղնախից, Իվան Միրզայեանցի միջոցով, հաւաքված տեղում 31 ռ. (ցուցակը կը տպվի), 7) Ալուշկայից, Յ. Յովհաննեանից, ուղարկելի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, 25 ռ., 8) Եալտայից, Կարապետ Պետրոսեանից 25 ռ., 9) Թիֆլիսում, Մկրտիչ Պալեանի միջոցով հաւաքված Պետրոս Թադէոսեանի հարսանիքի հանդէսին 14 ռ. 55 կ. (ցուցակը կը տպվի), 10) Թիֆլիսում, Հմայեակ Վահանեանից, ուղարկելի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, 100 ռ., 11) Վարդաշէնից, Գր. Դուրմիշխեանից, յանձնելի Նպաստ. Ընկ., 25 ռ., 12) Թիֆլիսում, բժշկապետ Տ. Գէորգբէկեանից 25 ռ.։ Գումարը 1486 ռ. 30 կ.։ Նախկին ստացված 42,026 ռ. 34 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 179) ստացել ենք ընդամենը 43,512 ռ. 64 կ.։ Աւելացնելով սրա վրա և յօգուտ Վանի տառապեալների ստացված գումարը՝ 187 ռ. 88 կ. (տես վերևի ցուցակ), կունենանք ընդամենը 43,700 ռ. 52 կոպէկ։

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիֆլիսում 1) Եփրոսինէա Զ. Սարգսեանից 20 ռ., 2) Աննա Ս. Ամիրխանեանից 5 ռուբլի։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Որովհետև Սաբուրթալօյում գտնված փախստականների մէջ երևացած խոլերայի տարածման առաջն առնելու համար՝ անհրաժեշտ է համարվել կազմակերպել մշտական բժշկական հսկողութիւն պատսպարանի վրա, նահանգապետը խնդրել է Քաղաքների Միութեան Կովկասի ճիւղի լիազօրներին, որ սրանք ուղարկեն մի բժիշկ պատսպարանը կառավարելու համար։

—

Ներկայումս Նաւթլուղում կան շատ հիւանդ (ոչ վարակված) հայ փախստականներ. այդ պատճառով քաղ. վարչութիւնը կարգադրել է, որ այդ հիւանդները տեղաւորվեն Նաւթլուղի Ալէքսանդրեան նախկին հիւանդանոցում։

—

Ի նկատի ունենալով որ փախստա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ»

III

Ուշարին ոչ միայն մի քսակ սև փողով իր գլուխն ազատեց դահիճների ճիրաններից, այլ առանց սոսկալու գովերգեց այն դամղան, որ տեսել էր Մայիֆէքէր հանըմի մերկ կրծքին։ Այդտեղ Մահմէդի աթոռակալ Համիդ խալիֆը իր թուղրան (գերբը) էր դաջել տուել և տակը արձանագրել տուել «Դէւթեւլի ամմէ» (լիազօր իրաւասու)։ Այդ դրօշմի դաջող նեգրուհին դաջելը վերջացնելուց յետոյ կեանքից զրկվել էր, որպէս զի գաղտնիքը գերեզման իջնի։

Եւ յանկարծ Եգիպտոսում տպագրված մի գրքի ճակատին Համիդ խալիֆի թուղրան դրօշմված լոյս աշխարհ եկաւ, որին անուն էր տուել Ուշարին «Դէւթեւլի ամմէ»։ Այդ գիրքը անմահացրել էր Մէյֆէքէր հանըմի չքնաղ դէմքը, վարդաբոյրը և կենսաբաշխ աչքերը, բայց պարզել էր աշխարհին ոչ միայն Համիդ խալիֆի սիրեկանին շնորհած թանգագին գանձերը, հասոյթները և անսահման կալուածները, այլ և նրա սխրագործութիւնները։

Որքան որ գովել էր Ուշարին Մայիֆէքէրի գեղը, չքնաղ դէմքը, այնքան էլ ծաղրել էր Համիդ խալիֆի սոսկալի կողոպուտները Մայիֆէքէրի ձեռքով։ Այդտեղ Ուշարին նկարագրում էր, թէ ինչպէս հիւանդանոցի մատեաններով ամեն օր իւրաքանչիւր հիւանդին մատակարարված էր մի օխա (3 ֆունտ) կարագ, մի օխա միս, մի օխա բրինձ, մի օխա շաքար, մի օխա միրգ, մի օխա հաց, մի օխա սուրճ, թէյ, շոկոլադ և կարկանդակ, բայց այդ բոլորից միայն մի մի դրհէմ (մսխալի կէսը) հասցնում էին թշուառ սովալլուկ հիւանդներին ու խեղանդամներին, իսկ 399 դրհէմը կուլ էր տալիս Մայիֆէքէր հանըմը, որպէս զի կարողանայ ամեն շաբաթ «Եօթը մահացու մեղքերի» շարաններ գնել, կուրծքը, բազուկը, սրունքն ու թեւերը զարդարելու։

Դեռ մամուլի տակից նոր էր լոյս տեսել «Դէւթեւլի ամմէն», երբ Համիդ խալիֆի լրտեսն այն գնեց և յատուկ սուրհանդակի ձեռքով գերմանական շոգենաւով Կ. Պոլիս իր հրամանատարին հասցրեց, որպէս զի միջոցներ գտնի և պատժել տայ Ալլահի շուքի գաղտնիքներին հետամտողին, Մահմէդի յաջորդի կանանոցը խուզարկողին, համայն իսլամի հրամանակալի գործերը քննողին։ Զեկուցումն ու գիրքը խռովեցին Համիդ խալիֆի հոգին, և նա հեռագրեց իր լրտեսին Կահիրէ.

«Ազնուամիտ զաւակս, ծախսի՛ր որքան պէտք է, բայց Ուշարիին հասցրու Ելդըզ»։

Այս հեռագրով չը բաւականացաւ իսլամի հրամանակալը և աշխարհի ահաբեկիչը։ Նա մի հեռագիր էլ ուղարկեց Եգիպտոսի իր փոխարքային հետևեալ բովանդակութեամբ.

«Իսլամի խալիֆից.

«Մեր սիրելի զաւակին, Եգիպտոսի պայծառափայլ խըդիվին.

«Ուշարի անունով երգիծաբանը պալատից գողացել է թանգագին գոհարներ և ապաստանել ձեր զարդարած Կահիրէ քաղաքը։ Նրան բռնել տուէք և յատուկ ոստիկանների յանձնելով հասցրէք փառաց օստանը։ Ես վստահ եմ ձեր հանճարեղ մտքին։ Դուք կարող էք ըմբռնել, թէ տիրադաւ սրիկին անհրաժեշտ է պատուհասել, որպէս զի ծառաները հնազանդեն իրանց տէրերին՝ երկրի խաղաղութիւնը պահպանելու համար։ Հաւատացեալների Իմամ ազամ (մեծ նահապետ) կնիքը»։

Խըդիվը օգնեց խալիֆի լրտեսը, և Ուշարիին բռնեցին ու տարան Իբրահիմ-փաշայի կառուցած ապարանքը, որը 80 տարուց ի վեր իշխում էր Նեղոսին և նրա շրջակայ անապատներին մինչև Սահարա-Սուդան։ Խըդիվը շատ հետաքրքրվեց Ուշարիի անձնաւորութիւնով և ուզեց անձամբ քննել ամբաստանվածին։ Ուշարին ոչ մի պատասխան չը տուեց խըդիվին լրտես Սուլէյմանի ներկայութեամբ, քանի որ այդ հայը իր դաժան նախանձորդն էր, որ իրան հետամուտ էր Կ. Պոլսից և գիտէր, որ չը պիտի կարողանար ճողոպրել դրա ճիրաններից։ Խըդիվը յուսահատված ասաց՝

— Ես լռութեանդ համար լեզուդ կտրել կը տամ այս բոպէին.—ու գոռաց,—դահիճ, «Ջալլատ»։

Ուշարին այնպիսի մի հայեացք ուղղեց խըդիվի աչքերին, որ սա իսկոյն զգաց դատապարտեալի միտքը և հրամայեց դուրս գալ հայ լրտեսին։ Այդ ժամանակ Ուշարին դարձաւ խըդիվի կողմը և ասաց.

— Դուք Եգիպտոսի տէրն ու հրամայողն էք, բայց ձեր երակների մէջ էլ հոսում է Մահմէդ-Ալի փաշայի այն արիւնը, որ նա բերել է Եգիպտոս Անատոլուի սարահարթերից։ Դուք չէք կարող անտարբեր մնալ այն ժողովրդի տառապանքի դիմաց, որը կեանք է տուել ձեր պապին և ձեր տոհմին։ Ես ոչ ադամանդ եմ գողացել, ոչ էլ շողակ. ես բացել եմ Համիդի և իր սիրուհու գողութիւններն աշխարհին, որպէս զի փրկեմ այն ժողովուրդը, որ տանջվում է համիդական մամուլի ճնշման մէջ։ Ահա իմ մեղքս։ Այս «Դէւթեւլի-ամմէն» գիրքը ցոյց է տալիս ձեզ, թէ ինչպէս մի օձ ամեն օր Ղալաթիայի կամուրջի գլխից թշուառ ժողովրդից կորզված տասը փարաներից (2 կ.) կիտված հազար ոսկի է ստանում, տասը հազար խնլագար, ցաւագար, վիրաւոր և հիւանդ բուժելու պատրուակով, և այդ գումարն անմիջապէս իր պէրճանքի գոհարներին է տալիս, սովի դատապարտելով տասը հազար անտէրունջեաններին։ Եթէ դուք սիրում էք ժողովուրդը, սիրում էք հայրենիքը և նրա թշուառ ազգաբնակութիւնը, պատսպարեցէք մի հայրենասէրի, որից զուրկ է ողջ Թիւրքիան, նոյն իսկ քո Կահիրէն...

— Իսկ ո՞վ է այդ սիրուհին, այդ «Դէւթեւլի-ամմէն», որին գոհել է իսլամի խալիֆան հաւատացեալ ժողովրդի հազարաւոր անտէրունջեաններին...

— Դա Մայիֆէքէր-հանըմն է. դա մի կտոր տեսօն է, որ ծաղրում է մեզ և սարկացրել է մոլեգին Համիդին... Եթէ դուք ցանկանում էք օգնել իսկական հայրենասէրին, ժողովրդի բարեկամին և երգիծաբան բուժիչին, փրկեցէք ինձ և անմահ յիշատակ թողէք յաջորդ դարերի ժողովրդին։ Ես ինչպէս ծաղրեցի «Դէւթեւլի-ամմէ» օձի ծիածանագոյն մանեակի գոհարները, այնպէս կը ներբողեմ ձեր արարքը, որը ձեր անունը կանմահացնի ապագայ քառասուն դարի մէջ յաջորդող ժողովրդի մէջ։

— Բայց ես ինչպէս քեզ պահեմ, երբ իսլամի խալիֆին յայտնի է, որ հէնց լըրտեսը քեզ բռնել է տուել և ինձ ներկայացրել։

— Շատ հասարակ կերպով։ Թոյլ տուր սպանելու հայ լրտեսին իր կատարած զըրպարտալի ոճիրների համար, իսկ ինձ փոխարէն մի ուրիշ թիւրք էլ բռնել տուր և ոստիկանների յանձնիր՝ իսլամի խալիֆին տանելու։ Ինձ պահիր քո ապարանքում, մինչև որ համոզվես իմ անմեղութեան և խալիֆ Համիդի պակասամտութեան մասին, որ նա տասնեակ հազար մուսուլմանների սովամահ է անում, մի օձ կնոջ, մի տեսօն վհուկի կապուտակ աչքերից և կամար ունքերից հիպնոսած։

Խըդիվը այդպէս էլ կատարեց։ Գրեց խալիֆին, թէ մեղադրված Ուշարին կալանաւորված պահին սպանեց հայ լրտեսին. ուստի ինքը պարտաւորված՝ ոճրագործին ուղարկում է արքունիք ուրիշ ոստիկանների հետ։ Իսկ Ուշարին դարձաւ խըդիվի մտերիմը և խորհրդականը Կահիրէում, խըդիվի ապարանքում։

Սակայն Մայիֆէքէր հանըմը չը համոզվեց. նա տեսաւ Եգիպտոսից եկած անմեղ զոհին, լսեց նրան և ասաց խալիֆին.

— Դու ոչ սուլթան ես, ոչ խալիֆ, ոչ տէր ես, ոչ էլ Ալլահի շուքը քո երկրի վրա. քեզ ծաղրում են քո հպատակները, քո իւլէմները, քո հոգեկատակները, իսկ դու քեզ երևակայում ես Մահմէդի աթոռակալ և հաւատացեալների հրամանակալ։ Ոչ, դու մի խրտուիլակ ես և քո անունով վայելում են փառք ու իշխանութիւն քո ստրուկները, քո ներքինիները, քո վէզիրները, իսկ քեզ, որպէս մի կալանաւոր, բանտարկել ու պահել են Ելդըզում։

— Մայիֆէքէր, Մայիֆէքէր,—ասաց կակազելով Համիդ խալիֆան...

—Ես չեմ կարող տանել այս նախատինքը, որ ինձ ծաղրէ մի ծաղրածու, մի մեմոս իր պատկերազարդ հրատարակութեամբ և աշխարհին պարզէ իմ կրծքիս դամղան, մարմնիս գոյնը, աչքերիս ցոլքը, թարթիչներիս սլաքները և անպատիժ մնայ։ Ես խալիֆի կին դարձայ, որպէսզի իշխեմ և թոյլ չը տամ պատիւս արատաւորելու։ Իսկ դուք ուզում էք ինձ հաւասարել ձեր գիւրջի, լազ, չէրքէզ և դիւրզի հարճերի ու աղախինների հետ։ Ես պահանջում եմ, որ ինձ արձակէք և ազատութիւն տաք, որ գնամ Եգիպտոս և վրէժխնդիր լինեմ ոչ միայն իմ, այլև իսլամի պատւի համար։

— Մայիֆէքէր, Մայիֆէքէր, գնացէք, ես ձեզ կուղարկեմ, Ուշարիին բռնել կը տամ, կտոր կտոր կանեմ, Մարմարայի ձկներին կեր կը լցնեմ...։

— Ձեր հրամանները ձեր մօրուսի տակից այն կողմը չեն անցնում,—ասաց Մայիֆէքէր հանըմը,—դուք ինձ ապահարզան տուէք...

— Ի՞նչ կարիք կայ ապահարզանի,—ասաց Համիդ խալիֆան.—վեր առ իմ շոգենաւը, գնա Եգիպտոս և վրէժխնդիր եղիր...

— Հապա Հայդար-փաշա՞ն։

— Մէկին փոխանորդ գիր, մինչև վերադառնալդ,—ասաց և կնիքը տուեց Մայիֆէքէրին, որ վաւերացնէ փոխանորդին տրվելիք հրովարտակը։

Մայիֆէքէրը առանց հասոյթից զրկվելու, նստեց շոգենաւ և գնաց Եգիպտոս։

Ատրպետ

կանների բժշկական օգնութեան գործի կազմակերպութիւնն իր վրա է վերցրել Քաղաքների Միութիւնը, այդ պատճառով Կարմիր Խաչի վարչութեան գլխաւոր լիազօրը Քաղ. Միութեան Կովկասի ճիւղին է ուղարկել Ուրմիայի փոխ-հիւպատոս Նիկիտինի հեռագիրը, որի մէջ վերջինս յայտնում է, թէ անհրաժեշտ է շտապով Ուրմիա ուղարկել սանիտարական խմբեր, այնտեղ կուտակված փախստականներին օգնելու, որովհետև նրանց՝ գիւղերում տեղաւորելը շատ դժուար է այն պատճառով, որ տեղական թուրքերը սկսում են վերադառնալ իրանց տեղերը, և փոխ-հիւպատոսը լուրջ երկիւղ է կրում այդ շրջանի սանիտարական անբարեկեցիկ դրութեան համար: Ներկայումս,—ասվում է հեռագրում,—բժշկական միակ օգնութիւնը, որ տալիս էր ամերիկական միսիան, սաստիկ թուլացել է վերջինիս կազմից մարդիկ պակասելու պատճառով:

—

Տիկ. Մ. Թայիրեան յայտնում է Մեծ-Ղարաքիլիսայից, որ այնտեղ հաւաքվել են մինչև 8000 փախստականներ, որոնք ծայրայեղ կարիքի մէջ են: Առանձնապէս բժշկական օգնութեան կարիք է զգացվում:

—

Հայկական Կենտրօնական Կօմիտէտը և Կովկ. Հ. Բ. Ընկ. Թիֆլիս եկած գաղթականներին հնար եղածին չափ պատսպարել է՝ տալով նրանց զգեստ, մի մասին տեղաւորել է մի քանի եկեղեցիների գաւիթներում եղած բնակարաններում, վարձել է առանձին սենեակներ, տուել է մի քանի ընտանիքներին ամսական նպաստ, իսկ մեծամասնութեանը տալիս է օրական նպաստ: Օրական նպաստը սկզբում տրվում էր 20 և 15 կ. իւրաքանչիւր անհատին, նոյնիսկ ծծկեր մանուկներին. վերջերս, ի նկատի ունենալով փախստականների շատանալը և կօմիտէի միջոցների սղութիւնը, տրվում է իւրաքանչիւր անհատին 10-ական կոպէկ, բացառութեամբ հիւանդների, որոնց տրվում է 20-ական կոպէկ: Միջին թւով օրական նպաստ ստացողներ եղել են 250—330 հոգի: Ապրիլ ամսվայ ընթացքում այդպիսի նպաստ տրվել է 2614 ր. 28 կ., մայիսին՝ 1583 ր. 5 կ., յունիսին՝ 1293 ր. 25 կ. և յուլիսին՝ 992 ր. 29 կ.: Ի հարկէ, այս հաշւի մէջ չեն մտնում Հ. Կօմիտէի այն ծախսերը, որպիսին նա անում է գաղթականների բժշկա-սննդական և այլ պէտքերը հոգալու գաղթավայրերում և Հայաստանում:

—

(Սեփ. Թղթակցից)

Էջմիածին, 24 օգոստոսի

Երէկ օգոստոսի 23-ին, կիրակի, երեկոյեան կայացաւ Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի նիստը, Նախագահութեամբ Բագրատ եպիսկոպոսի և մասնակցութեամբ Մատթէոս, Խորէն եպիսկոպոսների, Գարեգին և Բաբգէն վարդապետների, Համառուսական Քաղաքային Միութեան լիազօրներ՝ Ալ. Խատիսեանի, Լևոն Եւանգուլեանի և Հասան-Ջալալեանի, Նպաստամատոյց Ընկերութեան ներկայացուցիչներ՝ Հ. Առաքելեանի, և Գր. Վարդանեանի, այլև Կանդուրալեանի նկարիչ Սարեանի (Ներկ. Մոսկվայի Կօմիտէտի) և Էջմիածնում գործող հայկական մարմինների ներկայացուցիչների:

Նիստը տևեց մինչև գիշերվայ ժ. 3-ը:

Զեկուցվեց, որ կառավարութիւնը կարգադրել է տալ փախստականների համար գնացքներ օրական 1500 հոգու համար, տեղափոխելու նրանց Գանձակի նահանգը, ուստի՝ քանի որ այլևս ոտքով չեն գնալու փախստականները Երևան-Դիլիջանի ճանապարհով, այլևս հարկ չը կայ այդ ճանապարհի վրա սննդական կայաններ հաստատել, այլ այդպիսիները պէտք է հաստատել երկաթուղու գծի վրա՝ Էջմիածնի կայարանում, Ալէքսանդրօպօլ, Ղարաքիլիսա, Կարաւազ, Գանձակ եւայլն:

Ի նկատի ունենալով որ մահացութեան քանակը հետզհետէ սաստկանում է շնորհիւ այն հանգամանքի, որ փախստականները ապրում են բաց օդի տակ, ենթակայ շոգերին, ցրտերին և անձրևներին, որոշվեց ձեռնարկել անմիջապէս փայտեայ բարակներ շինել նոր վեհարանի պարսպի շուրջը:

Զեկուցվեց, որ Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջոցով մինչև այսօր ստացել է դրամական նուէրներ ընդամենը 800,000 ր., որից ծախսված է մինչև այսօր 600,000 ր. և մնում է 200,000 ր., բայց որովհետև Յանձնաժողովը օրական 15—20,000 ր. է ծախսում, այդ գումարը շուտով կը վերջանայ, հետևաբար համառուսական քաղաքների միութեան օգնութիւնը՝ իր վրա վերցնելով բժշկական-սանիտարական մասը, խիստ տեղին է և մեծ օժանդակութիւն է, բայց այնու ամենայնիւ Գլխ. Կարգ. Յանձն. իր հիւանդանոցը չը պէտք է փակէ, որովհետև հիւանդների թիւը 1500—2000 է, իսկ Միութեան հաշւով բացվող հիւանդանոցն ունենալու է միայն 500 մահճակալ:

Ապա Յանձնաժողովը քննեց Խորէն եպիսկոպոսի մի կարևոր զեկուցումը և առաջարկը: Սրբազանը տեսակցութիւն է ունեցել գեներալ Օ.-ի հետ, և յայտնվել է, որ ներկայումս Դիադինի, Ալաշկերտի, Բայազիդի շրջաններում 19 գիւղեր կան, ուր հունձ կարող են անել, տալ մի մասը զօրքին դրամով, մնացածը վերցնել իրանց համար. այդ պատճառով՝ հարկաւոր է կազմակերպել գործը, որ մեծ թւով փախստականներ գնան այդ շրջանները՝ տանելով իրանց հետ գործիքներ և հունձք անեն ու պաշար հաւաքեն: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել մի ղեկավար մարմին, յատկապէս այդ գործը վարելու. այդ մարմինը պէտք է ունենայ իր կենտրօնավայրը՝ Ղարաքիլիսէն (Ալաշկերտ). ապա նա իր ձեռքի տակ պէտք է ունենայ աշխատող ինտելիգենտ ույժեր:

Հ. Առաքելեան՝ անհրաժեշտ գտնելով այդ առաջարկի իրագործումը՝ յայտնեց, որ գործի գլուխ պէտք է կանգնած լինի մի հեղինակաւոր և դիրք ունեցող անձն, որպիսին կարող է լինել Խորէն եպիսկոպոսը. պէտք է խնդրել սրբազանին, որ գոնէ 15—20 օրով գնայ Հայաստան, կազմակերպէ այդ գործը իբրև ղեկավար և Նախագահ Եղբայրական Օգնութեան Կօմիտէտի. Խորէն եպիսկոպոս ընդունում է այս առաջարկը և որոշվում է կազմել Եղբ. Օգնութեան Յանձնաժողով Կարաքիլիսէում, բաղկացած 4 հոգուց (Էջմիածնի Գլխ. Կարգ. Յանձնաժողովի, Նպաստ. Ընկերութեան, Հայ Կենտր. Կօմիտէտի ներկայացուցիչներից): Խորէն եպիսկոպոսին կընկերանայ և պ. Հասան-Ջալալեանը՝ կազմակերպչական գործերի համար:

Որոշվեց խնդրել Ալ. Խատիսեանին դնել Խորէն սրբազանի տրամադրութեան ներքոյ մի աւտոմօբիլ:

ԳՈՐԾԵՑԷՔ ԱՌԱՆՑ ՊԱՐԾԵՆԱԼՈՒ

—

Տարօրինակ է հայերիս կեանքը. մի բան չենք անի առանց թմբկահարութեան, առանց ինքնագովութեան: Անհատական կեանքում, երբ մի վիպասան, բանաստեղծ, դերասան իր կլակօրներն է ունենում, որոնք աջ ու ձախ իրանց պատրօնի գովքն են անում և առիթը չեն բաց թողնում նրանց մեծացնելու, փքելու, թէև տգեղ է, բայց մենք վարժւել հաշտւում ենք. թող գովեն, ինչքան ուզում են, ասում ենք, դրանով մի վնաս հասցնել չեն կարող, մանաւանդ եթէ այդ գովասանքը հրապարակ հանելով ուրիշներին չեն վատաբանում, չեն նսեմացնում: Բայց երբ նոյնպիսի միջոցի դիմում են ընկերութիւնները, հաստատութիւնները, յանձնաժողովները, և այն՝ սոսկալի աղէտների ժամանակ, դա արդէն անտանելի է և գործին վնասող: Չը գիտենք, արդեօք հասարակական զգացմունքները այնքան բթացած են, որ „ընկերութիւնները, հաստատութիւնները, յանձնաժողովները ստիպված են իրանց գործունէութիւնն ուռցրած հրապարակ հանել վստահութիւն ներշնչելու և դրամական նպաստ ստանալու համար, թէ, ընդհակառակը, այդ հաստատութիւններն այնպէս են միշտ տարել իրանց գործերը՝ փքած, ուռցրած, որ այժմ ժողովրդի վրա ազդելու համար չեն կարող հրաժարվել այդ տգեղ միջոցից: Սակայն իրողութիւնն այն է, որ բոլորն անխտիր ուզում են հասարակութեանը հաւատացնել, որ եթէ հրապարակի վրա գործ է կատարվում, կատարվում է բացառապէս կամ մեծ մասամբ իրանց միջոցով, որ իրանք հասնում են ամեն տեղ և ամեն բան իրանք են անում:

Յօդուածիս առիթ են տալիս այն մի քանի հեռագրական և լրագրական թղթակցութիւններն ու նամակները, ուր կարմիր թելի պէս անցնում է այն գովասանքը, որ ամեն մի հաստատութեան կողմնակիցը թմբկահարում է հասարակութեան ականջին:

Ամբողջ հայութիւնը ցնցող թիւրքահայկական աղէտը, որ պայթեց մեր գլխին, բնականաբար ամեն մի անհատի, հաստատութեան, ընկերութեան հարկադրում է հրապարակ գալ և իր աջակցութիւնն ընձեռել թեթևացնելու եկած թշուառութիւնը, փրկելու Հայաստանի փլատակներից դուրս եկած և սոված, հիւծված, խոնջացած ու հիւանդ մեզ մօտ հասած թշուառներին: Կարիքն այնքան մեծ է և թշուառութիւնն այնքան ահռելի, որ ոչ մի ընկերութիւն, ոչ մի յանձնաժողով, կօմիտէ մենակ չի կարող բաւարարել այդ պահանջների մի հազարերորդ մասն անգամ, ուր մնաց թէ ամբողջը: Բոլորի վէրքերը դարմանելու համար համայն հայութեան միահամուռ գործունէութիւնն ու դրամական նպաստները բաւական չեն լինի նոյն իսկ:

Եւ ահա այսպիսի ծանր օրերում, երբ մենք սպասում էինք տեսնել մեր բոլոր հաստատութիւններին խտացած, միացած, մի միութեան մէջ ամբողջացած, ընդհակառակը, դառնելով մամուլում լոյս տեսած հեռագրերով և թղթակցութիւններով, տեսնում ենք, թէ ինչպէս հասարակութեան առաջ թմբկահարում են մարդիկ, որ իրանց կօմիտէն է շատ գործ կատարում, իսկ ուրիշները՝ ոչ:

Այսպէս, օրինակ, Թիֆլիսի Կենտրօնական Կօմիտէտի նախագահ պ. Ս. Յարութիւնեանը հեռագրով ի լուր աշխարհի յայտնում է, որ գաղթականներին խնամելու հոգսը գլխաւորապէս Թիֆլիսի Կենտրօնական Կօմիտէտի և Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի վրա է ծանրացած, և ոչ մի խօսք Մոսկվայի Կօմիտէի կամ Նպաստամատոյցի, կամ Երևանի Յանձնաժողովի մասին:

Մոսկվայի Կօմիտէի լիազօրը ջոկ և նոյն Կօմիտէի մի այլ պարոն ջոկ հեռագիրներ են տեղում, որ իրանք էլ կան, իսկ վերջինս քիչ աւելի առաջ գնալով՝ համեմատութիւն է դնում և գտնում էր, որ Մոսկվայի Կօմիտէն աւելի շատ գործ է կատարում, քան միւսները միասին առած:

Չը կամենալով քննադատել իւրաքանչիւր մարմնի գործունէութիւնը, որ ընդհանուր առմամբ պակասաւոր է—և պակասաւոր է, որովհետև շատ մեծ է կարիքը և միջոցները շատ քիչ—մենք հրաւիրում ենք բոլոր հաստատութիւններին և յանձնաժողովներին համախմբվել Գլխ. Կարգադրիչ Յանձնաժողովի շուրջը, բոլոր ույժերը լարել, առանց «մենք ու դուք»-ի գործել միասին մեզ մօտ ապաստանած թշուառների համար և միմիայն նրանց համար: Պարոններ, գործեցէք առանց պարծենալու: Դուք պարտականութիւն ունէք կատարելու և պարտականութիւն կատարելը թմբուկի և պարծենալու կարիք չունի:

X.

ՈՒՂՂԱՄԻՏ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

—

Անցաւ մի ամիս, ինչ երկրորդ սոսկալի գաղթականութիւնը եկաւ առաւ ջուր ածելու մեր վառ երազների և յոյսերի վրա: Մենք տեսանք Վասպուրականի, Մուշի և Ալաշկերտի ժամանակաւոր դատարկումը. տեսանք գաղթականութեան արհաւիրքը, զգացինք մեզ հասցրած ծանր վէրքը... Տարաբաղդաբար մէկը չէ մեր թշնամին. մենք վէրքեր, թերևս աւելի խորունկ և մահաբեր, ստացել ենք և ոչ թշնամիներից. մենք եղել ենք քմահաճոյքների և պատահականութիւնների գերի, եղել ենք զոհ մեր չունեցած մեղքերի և անհասկացողութեան համար... Բայց ժամանակը չէ այդ մասին գրելու. ապագայ պատմագիրն անշուշտ հնարաւորութիւն կունենայ շատ գաղտնիքներ բանալու և իրական մեղաւորներին ի լոյս աշխարհ դուրս բերելու: Այժմ մենք աւելի շատ մտածելու ենք և աշխատելու:

Գաղթականութեան յորդ հոսանքը սկսելուց յետոյ փախստականներին խնամելը դարձաւ արտակարգ, անյետաձգելի և հրատապ մի պահանջ: Կովկասահայերս ըստ մեր կարեաց անցած ամսում ջանացինք աւելի մեծ թիւ գաղթականների արցունք սրբել և նրանց սփոփել: Տիգրան Նազարեանը այդպիսի ջանքերի մի փայլուն օրինակ է տուել, չեղած տեղից բանալով գաղթականների համար ցերեկվայ ապաստարան, ճաշարան և թէյարան:

Այդպէս պիտի շարունակել և այսուհետև, մինչև գաղթականութեան աջող վերադարձը:

Բայց միայն այդ մեծագոյն գործը՝ մահի և սովի ճանկերում տառապողները չեն, որ մեզանից աշխատանք են պահանջում: Մենք ունենք և մեր՝ դեռ անպարտ եռանդ և անվերջ զոհեր պահանջող ազգային դատը, որ մեր իղձերն է, և առանց որի մենք չենք կարող ապրել: Ոչ ոք չի ասում, թէ այս գաղթականութեամբ խաչ է քաշվում մի ամիս առաջ մեզ թևաւորող յոյսերի և ազնուին նպատակների վրա: Անշուշտ՝ այս երկրորդ գաղթականութիւնը անլուր է, անօրինակ և աննախընթաց. ճիշդ է՝ դրանով մեր հաւաքական գոյութեանը հասցվել են խորունկ վէրքեր, որոնց պատճառած ցաւի տանջանքից կարկամել են շատերը: Բայց՝ որքան էլ անհուն լինի տառապանքը, որքան էլ մեծ լինի դժբաղդութիւնը և որքան էլ խորունկ լինեն վէրքերը, մենք այնու ամենայնիւ չը պէտք է մոռանանք մեր այն նպատակները, որոնց իրագործման միջոցին հասաւ այդ փորձութիւնը. և ինչպէս ամեն մի փորձութիւն, այս մէկն էլ է գալիս աւելի կատարելագործելու մեզ և աւելի ամրապնդելու մեր հաւատն ու համոզումները: Չը վախենանք հասցված վէրքերից. բաւական է այն, որ առողջ և կենդանի է էութիւնը, անվնաս է սիրտը, գործում է միտքը և չեն խաւարել մեր աչքերը՝ հեռու հօրիզոնների փայլուն ճաճանչները տեսնելու:

Մի բնական օրէնքի ույժով իւրաքանչիւր անհատ դժբաղդութեան անակնկալ պոռթկումի դէպքում պահ մի կանգ է առնում և յետադարձ հայեացք է գցում կատարված վերջին գործերի վրա: Դա ինքնաքննութեան պահանջն է, որ ամեն մարդ ունի, նոյն իսկ ամենամոլի ինքնավստահները: Հաւաքական մարմինները նոյնպէս ունեն այդ ինքնաքննութեան պահանջը: «Մշակում» առաջնորդող յօդուածներով ինքնաքննութեան առաջարկը արվեց և մի յետադարձ հայեացք ձգվեց՝ հեռուն և գալիքը աւելի ճիշդ տեսնելու համար: Եւ շատ ցաւալի է, որ մի ամսից աւելի անցնելուց յետոյ որոշ խմբակցութիւններ միայն այսօր են զգաստացել և թողնելով իրանց յաւակնոտ մտքերը ուրիշներին են մեղադրում կարճամտութեան մէջ. դա ապացոյց է այն բանի, որ նրանք զգացին իրանց սեփական կարճամտութիւնը և դրութեան անհասկացողութիւնը: Այդ էլ ուրախալի է. լաւ է ուշ, քան երբեք...

Բանը նրանումն է, որ ներկայ գաղթականութիւնը լոկ մի փորձութիւն էր՝ պատերազմական պայմաններում անխուսափելի պատահար. և այդ սպասելի էր. միայն մենք մեր ընդհանուր կարճամտութեամբ անպատրաստ ենք եղել նրան ընդունելու. երբ Վանը մայիսի 7-ին անցաւ մեր ձեռքը մենք դեռ այն ժամանակ այդ ցնծութեան օրերին հրաւիրեցինք հասարակութեանը չարբենալ յաղթութեամբ, որովհետև ամրութիւններ և քաղաքներ վերցնելը պատերազմի ընթացքում լոկ ռազմական մի-մի էպիզօդներ են և որ նրանցով չէ որոշվում յաղթութեան բաղդը: . . . .

. . . .

Քննութեան ենթարկելով մեր հին ծրագիրները, մենք տեսնում ենք, որ պատահական ոգևորութեամբ տարված ենք եղել մի իդէալով և վարդագոյն ակնոցների միջով ենք նայել մեզ և մեր հովանաւորողին, ապրել ենք այն երազով, թէ մեր գեղեցիկ գաղափարը սաւառնում է ազատագրված հայրենիքի լեռներում: Բայց այդ սոսկ կրկներևոյթ էր, տեսողութեան պատրանք. մենք չը գիտէինք, կամ չէինք ուզում գիտենալ, որ մինչև կիրակին դեռ կան շատ օրեր, և ստացվեց այն յիմար դրութիւնը, որ մենք զգացինք, որ «ուրբաթը շուտ եկաւ, քան շաբաթը». ի հարկէ այդպէս էլ պէտք է լինէր. աննախատեսվածը իր գոյութիւնը ցոյց տուեց, և մենք մնացինք շշմած՝ «ինչպէս, այդպիսի բաներ էլ պէտք է լինէի՞ն». այդ միևնոյն էր, թէ՝ «ի՞նչպէս, ուրբաթ էլ պէտք է անցնէ՞ր, որ շաբաթ ու կիրակին գար»:

Այս բոլոր մտորումները հետևանք են ինքնաքննութեան, առանց որի ոչ մի գործ անվրէպ չէ կարելի մինչև վերջը տանել:

Եւ ահա այդ ինքնաքննութեան օրերին «Մշակը» առաջ մղեց փախստականներին օգնելու և խնամելու գործը «իբր առաջին պահանջ»: Մի քանի կանխակալ մտքերով կուրացածներ այդ մտքերը չը հասկացան և թիւր եզրակացութիւնների յանգեցին:

Գաղթականների օգնութեան խնդիրը ուժգին կերպով արածարծելուց յետոյ՝ քննութեան առնելով կամաւորական խմբերի հարցը, «Մշակը» իր խմբագրի ստորագրութեամբ շատ որոշակի կերպով յայտնել է, որ մենք կէս ճանապարհից ետ դառնալու չենք, շարունակելու ենք ընթանալ. . . . .

. . . . Ապա այդ տողերը գրելուց մի օր յետոյ արձանագրում է այն տիրող մտածմունքը, թէ այսօր անհրաժեշտութիւն է զգացվում կամաւորների թիւն աւելացնել, մի քանի հազարից դարձնել տասնեակ հազար, և հաստատելով այն փաստը որ մասնակի նուիրաբերութիւններով չէ կարելի միլիոններ պահանջող և գաղթականների և կամաւորների գործը կարգաւորել՝ երբ քննելի մտքով առաջարկված էր կամաւորների գործը կազմակերպել այնպէս, ինչպէս լատիշներն են արել, որոնք պահում են զուտ լատիշներից կազմված բատալիոններ և սրանց պահպանման ծախսը հոգում է ամբողջովին պետութիւնը:

Եւ որովհետև այս առաջարկութիւնը չէր կարելի բազմակողմանի կերպով քննել մամուլի մէջ, (նրա հետ կապված են մի շարք փափկանկատ խնդիրներ), հէնց այն ժամանակ էլ «Մշակը» առաջարկել էր, որ հանդէս գայ հայ ժողովրդի ներկայացուցչական կամքը, որի արտայայտման համար անհրաժեշտ էր գտնված, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գումարէ Էջմիածնում իր նախագահութեամբ եթէ ոչ ազգային, գէթ խորհրդակցական ժողով: Այդ առաջարկութիւնը պէտք է պաշտպանէին և կամաւորների գործին ծառայող մարմինները, որոնք ստացել են որոշ լիազօրութիւններ: Ներկայի նման ծանր և պատասխանատու օրերում, երբ անակնկալ մի դէպք կարող է վերից վար տակն ու վրա անել ստեղծված դրութիւնը և յեղաշրջել ընդունված կուրսը, լիազօրված վստահելիների վրա պարտականութիւն է ընկնում անխզելի կապ պահպանել զանգուածի հետ և ստէպ-ստէպ ստանալ նրա վստահութեան նոր գրաւականները: Անցեալ սեպտեմբերին կամ փետրվարին գումարված ժողովներին ստացած վստահութիւնը և լիազօրութիւնը յարատև չէ կարող լինել. անհրաժեշտ է այն թարմացնել, որի համար և պէտք է գումարել նոր ժողով, բայց ոչ հների նման... Այժմ, ինչպէս ճիշդ նկատել էր պ. Ս. Տ., հերթական գործերից մէկն է և մեր մարմիններին՝ «արտաքուստ իրաւազօր և պաշտօնական բնոյթ և դիրք տալու» խնդիրը: Ահա այդ խնդրի և ուրիշ խնդիրների քննութեան համար և «Մշակն» առաջարկել էր ժողովի գումարման հարցը:

Գ.

ՄԻ՞ԹԷ ՔԱՐԱՑԵԼ Է ՁԵՐ ՍԻՐՏԸ

—

Համաշխարհային այս կատաստրօֆան, ինչպէս տեսնում ենք, իր սարսափելիութեամբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը տակն ու վրա է արել: Մէկը միւսի ետևից աւերվում են երկար տարիների ընթացքում անխոնջ աշխատանքով ձեռք բերված կուլտուրայի բարիքները. էլ չեն քաղաքներ ու հրաշակերտ ապարանքներ անխնայ կերպով մոխրակոյտ դարձած և հողի հաւասարեցրած: Իսկ միլիոնաւոր մարդկանց թափված արիւնից գետեր գոյացան և հարիւր հազարաւոր մարդ, կին ու երեխայ մնացին անտէր՝ ենթակայ սովի ու հիւանդութիւնների:

Այս բոլորից անմասն չը մնաց նաև դժբաղդ հայութիւնը: Վերջինիս կրած տանջանքների ու զրկանքների առաջ նսեմանում են հայի արիւնոտ պատմութեան ընթացքում կատարված բոլոր սոսկումները: Հայաստանը առանց հայի թողնելու միտքը չարանենգ Թիւրքիան իրագործում է. մեր փայփայած երազանքները բաղդը չունեցան իրագործված տեսնելու, և այսօր կատարված իրողութեան մերկ պատկերը, որ այնքան հիասթափեցուցիչ է և եղկելի, մեզնից պահանջվում է՝ լինել աւելի զգոյշ ու շրջահայեաց. այսօրվայ կատարված իրողութիւնը պահանջում է՝ լինել համակված ընդհանուր վշտով՝ կատարելիք պարտքի ամբողջ գիտակցութեամբ:

Զոհաբերութիւն, նիւթական օգնութիւն՝ ահա ներկայ մոմենտի պահանջը:

Այս պահանջն են առաջադրում մեզ երկու հարիւր հազարից աւելի փախստականներին օգնութիւն հասցնող մեր բարեգործական հաստատութիւններն ու յատուկ ընտրված մարմինները: Մեր խնամքին են ապաւինում ամեն ինչից զրկված մեր եղբայրները. երէկվայ չէն օջախի տէրն այսօր վիզը ծռած՝ հաց է խնդրում մեզանից:

Իսկ մենք կատարում ենք մեր պարտքը:

Ի բնէ հոգատար վերաբերմունք ցոյց տուող հայ գեղջուկը, կարելի է ասել, հանդէս է եկել իր բարոյական պարտքի խորը գիտակցութեամբ և կատարել է այն, ինչ որ կարողացել է: . . . .

. . . .

Շատերի պէս մենք ևս համոզված ենք, որ մեր հարուստները, եթէ ինչքան ծախսում են իրանց անձնական զուարճութիւնների համար զանազան կաֆէ-շանտաններում, նոյնքան էլ յատկացնէին մեր փախստականների օգտին, վերջիններիս օգնելու մասին այլևս մտածելու հարկ չէր լինի:

Իսկ եթէ մեր պարոնայք հարուստները զանազան կասկածներ տանելով՝ չեն վստահում փող բաց թողնել. եթէ մտածում են, որ իրանց օգնութեան դիմողներն ի չարն են գործ դնում հասարակութեան վստահութիւնը և այն պատճառով էլ ներկայ աղէտի հանդէպ հոգ չեն տանում, ապա պէտք է ասել, որ այդ իսկի արդարանալու միջոց չէ: Եւ, իսկապէս, եթէ դուք հայ ազգի անդամներ էք, եթէ ձեր մէջ չէ մարել ազգային ինքնագիտակցութիւնը, ապա դուք չը պէտք է սպասէք, որ ձեզ դիմեն, այլ ինքներդ ինքնաբերաբար պէտք է հանդէս գաք և ձեր իսկական ներկայացուցիչների միջոցով կատարէք այն, ինչ որ ներկայիս ծանր կացութիւնն է թելադրում:

Եւ եթէ այդ չէք անում, եթէ զլանում էք հայ ազգին հասած աղէտի համար ձեր ունեցած միլիոնների մի տասներորդական (ինչ ենք ասում. գոնէ քսաներորդական) մասը յատկացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանաւորութեամբ Էջմիածնում գործող Կօմիտէին, որի բարեխղճութեան նկատմամբ ոչ մի կասկած չը կայ, ապա ասացէք խնդրեմ, էլ ո՞րն է ձեր raison d'être-ը, էլ դուք ո՞ր օրվայ համար գոյութիւն ունէք:

Մի՞թէ քարացել է ձեր սիրտը:

Խանքենդ   Ա. Ասլանեանց

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

—

Ռուս քաջարի զօրքը Ալաշկերտի հովիտում Դայխար գիւղի մօտ գտել է 2 մանկիկ՝ քոյրեր Մօվինար և Նոյեմզար Մանուկեանները: Այդ մանուկները բերվել են Թիֆլիս և Նաւթլուղի ոստիկանութեան յանձնվել, ուր մնացել են քանի օր: Եւ երբ զեկուցումը սրանց մասին հասել է պ. ոստիկանապետին, սա վստահել է այդ մանուկները մեզ: Երեխաներին պաշտօնական գրութեամբ ոստիկանական պաշտօնեան բերաւ Հայաստանի բեկորների ապաստարանը հէնց այն ժամին, երբ Թիֆլիսի հայութեան բոլոր խաւերից անհամար բազմութիւնը հայրենիքի մարտիրոս-նահատակների հոգեհանգստեան աղօթքով արտասուք էր թափում հեղեղի նման: Կուսանաց անապատի կոյսերը յուզված՝ պատրաստակամութիւն յայտնեցին այդ անմեղ, զօրքի ոտի տակ ընկած հրեշտակներին որդեգրել ու առան, տարան իրանց հետ կուսանոց: Հրապարակական շնորհակալութիւն Թիֆլիսի պ. ոստիկանապետին, փառք և յաւերժ յաղթանակ ռուս պանծալի զօրքին:

Թիֆլիսի առաջնորդարանն էլ է մեզ ուղարկում իրան դիմողներին:

Իսկ ապաստարանում ութամեայ Խչօն ամեն օր ճաշ է տանում հօր համար:

— Խչօ, ինչու հայրիկդ էլ մայրիկիդ հետ միասին չէ գալիս այստեղ ճաշելու, հիւա՞նդ է:

— Ոչ, քեռի, հիւանդ չէ, բոբիկ է:

Կարող էք պատկերացնել ձեզ այս ողբերգական վիճակը: Նամուսով հայը համաձայն է սովամահ լինելու, բայց բոբիկ ինչպէս երևայ իւրայինների մէջ: Չէ որ դեռ երէկ նրա առաջ մի քանի հոգի էին սպասաւորում...

Օրերս կը բացվի մեր ապաստարանին կից և կօշկակարի արհեստանոց, ուր կաշխատեն մի քանի փախստական կօշկակարներ:

Ստացել ենք նուէրներ.

Իրերով՝ տիկին Գայիանէ Խունունցից 8 զոյգ կօշիկներ: Տ. Ներսէս ք. Ղամազեանից 10 հատ «Համառօտ քարոզներ»:

Դրամով.

Մ. Սուլթանեանի միջոցով տիկ. Սօֆիա Մինասեան Գէորգեանից 100 ր., «Тиф. Листокъ» լրագրի խմբ.-հրատ. Խաչատուր Խաչատրեանից 100 ր., Ալէքսանդր Բաղդասարեանից իր հանգուցեալ Սօֆիա քրոջ և նրա ամուսին Միքայէլ-խան Յովսէփեանների յիշատակին 20 ր., Թիֆլիսաբնակ Թիւրքահայ Բուլանըխ գաւառի Խօշ-Կէլդի գիւղացի Գէորգ Աւօյեան Պօղոսեանից մատաղի փոխարէն 5 ր., Յարութիւն Ղազարեանից 1 ր., Սարգիս Պապեանից 1 ր., Ա. Սարգսեանից 2 ր., Գր. Մարտիրոսեանից 2 ր., Բաբենցեանից 10 ր., Աւալեանից 1 ր., Թադէոս Տէր-Միքայէլեանից 10 ր., Կ. Ծովեանեանից 1 ր., Ադամ Մօվս. Շահ-Պարոնեանից 10 ր., Եսայի Մելիք-Եօլչեանից 4 ր., Արշակ Եգօրեան Եարեանից 3 ր., Ա. Մախաթճեանից 10 ր., Ստեփան Քաթանջեանից 1 ր., Յովհաննէս Յովհաննիսեանից 1 ր., Արտաշէս Բարօնեանից 50 կ., Ովաննէս Բարախանեանից 1 ր., Հրաչեայ Արարատեանից 3 ր., Փեփրոնիա Ալեանակեանից 1 ր., Պետրօգրադից՝ Առաքել Սարուխանեանից 5 ր. (պատկերների վճար)։

«Մշակի» միջոցով՝

Սուրա Բալոյեանից 15 ր., Բագուից յիշատակ Վարվառէ, Զառի և Բալասան հանգուցեալ մայրերի, նրանց յիշատակը յարգողից 9 վ., Երեւանից Լեոն Միրզոյեանից, Ա. Բարայեանից, Լ. Քիշմիրեանից և Մ. Ալոյեանից 2 ր. 55 կ., հ. Դ. վ. Կալատոզեանից 5 ր., Պօղոս Գծուրգէնեանից 3 ր., Տաքախմելայից՝ հ. Ղեւոնդ ա.-ք. Աթանասեանից 5 ր., բժշ. Յովհ. Մելիքեանից 50 ր., Մելիք-Հախնազարեանից 10 ր., Խարկովից Կ. Ժամկոչեանից 25 ր., Ալուպկայից Ց. Յովհաննեանից 10 ր.։

Իգօբէլնայա կայարանից Ս. Նազարեանից 6 ֆ. չայ։

Նուխի *** -ին.—Մատենագիր Վրթանէս Փափազեանի հասցէով ուղարկված է Նուխի պահանջված երկու պատկերների փոխարէն չորսը, Ծալէթի վանքին էլ նուէր։

Տ. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նախանցեալ օրը Էջմիածնից Թիֆլիս վերադարձաւ քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ուր նա, ինչպէս յայտնի է, գնացել էր փախստականների գործով։

◆ Թիֆլիսի զինուորական վարչութիւնը առաջարկել է Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղին կազմել սանիտարական-տրանսպորտային 4-դ խումբ, որը պէտք է ուղարկվի Իգդիր-Վան ուղղութեամբ։

◆ Ջէչէլինի ֆիրման դիմել է Նահանգապետին, միջնորդելով որ բարձրացվի կաթնային մթերքների սակագինը, որովհետև գոյութիւն ունեցող սակագինը, նրա ասելով, վնասակար է։ Այդպէս, ֆիրմայի կարծիքով, I տեսակի կարագի գինը պէտք է բարձրացվի մինչև 72 կ., II կարգինը 68 կ. ֆունտը, կաթը 6 կ. բաժակը, պանիրը 33 կ. և աւելի և այլն։ Նահանգապետը այս խնդիրը յանձնել է քաղ. վարչութեան հայեցողութեանը։

◆ Ինչպէս յայտնի է, քանի ժամանակ է քաղաքում քարածուխ չը կայ, որի համար և քաղ. վարչութիւնը զանազան տեղ դիմումներ էր արել. ի միջի այլոց դիմել էր նաև Ռոստով։ Այժմ Ռոստովի Դ./Վ. շրջանային կոմիտէտը չի թոյլատրում տեղի քաղ. վարչութեանը Թիֆլիս քարածուխ ուղարկել և խորհուրդ է տալիս օգտվել Տկվիբուլի քարածուխով։

◆ Վերջին օրերս, ինչպէս երեւում է հիւանդանոցի տուած ցուցակից, խոլերայով հիւանդանալու դէպքերը նուազել են։ Հիւանդանոց տարված հիւանդների մեծ մասը կասկածելի են։

◆ № 40 լազարէթում բծաւոր տիֆով հիւանդներ կան 42 հոգի։

◆ Կուր գետի ջուրը նորից բակտերիոլօգիական քննութեան ենթարկվեց։ Քննութիւնը պարզեց, որ ջրի մէջ խոլերային բացիլ չը կայ։

◆ Համառուսական Քաղաքների Միութեան գլխաւոր լիազօր Մ. Վ. Չելնոկովից հեռագիր է ստացվել, որի մէջ ասվում է, թէ Միութեան կովկասեան բոլոր կոմիտէտները ոչ ուշ, քան սեպտեմբերի 1-ը, պէտք է հաշիւներ ներկայացնեն կազմակերպութիւնների և լազարէթների վրա ծախսված գումարների մասին։

◆ Քաղաքի վեց ձրի թէյարաններն օգոստոսի 21-ից մինչև 23-ը թէյարանները յաճախողներին տուել են 21,412 բաժակ թէյ։ Թէյարաններն օրական, միջին թւով, բաց են թողնում 10,000 բաժակ թէյ, իւրաքանչիւրը առանձին մօտաւորապէս 2000 բաժակ։

◆ Քաղ. վարչութիւնն արդէն սկսել է նպաստներ տալ այն անձանց, որոնք վնասվել են Թիֆլիսում գարնանը եղած հեղեղներից։

◆ Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Ի. Զ. Տէր-Ստեփանեանի առեւտրական դըպրոցի վերատեսուչը խնդրում է զինուորական ծառայութեան մէջ գտնվող դպրոցի նախկին աշակերտներին՝ ուղարկելու իրանց լուսանկարները ինքնակենսագրութեամբ հանդերձ, որ պէտք է զետեղվեն մօտիկ ապագայում լոյս տեսնելիք «Участники 2-й отечественной войны изъ торговой школы И. З. Теръ-Степанова» պատկերազարդ գրքի մէջ։

ԿՈՎԿԱՍ

◆ «Т. Л.»-ին հեռագրում են Գանձակից, որ Նահանգապետը և քաղաքագլուխը մեկնեցին Ղազախի գաւառի սահմանները՝ փախստականներին ընդունելու համար։

◆ Բագւում խոլերայով հիւանդացել են 8, մեռել 1։ Հիւանդանոցում կան 32 խոլերայով հիւանդ, իսկ կասկածելի 12։

◆ Բագւի քաղաքապետի կարգադրութեամբ շաքարաւազի ֆունտը Բագւում ծախվում է 15½ կոպէկով։

◆ Գանձակում բակտերիօլօգիական քննութիւնը երեւան է հանել խոլերայով հիւանդանալու մի դէպք։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պերմից տեղեկացրել են, որ Բուրցեվը մեկնել է եւրոպական Ռուսաստան։

◆ Պետական Խորհրդի և Դումայի կենտրոնական առաջադէմ ֆրակցիաների միջև սկսված բանակցութիւնները աւարտվեցին համաձայնութեամբ, որին յարել են առաջադէմ նացիօնալիստների, կենտրոնի, զեմստվային, հոկտեմբերեանների, ձախակողմեան հոկտեմբերեանների, կադէտների և անկուսակցականների դումայական ֆրակցիաները։

◆ Ժիտոմիրի նահանգապետը վստահացրել է հասարակութեան, որ մօտիկ ապագայում թշնամու կողմից ոչ մի վտանգ չէ սպառնում քաղաքին։

◆ 1) Ինչպէս յայտնի դարձաւ, Ռուսաստանի շատ քաղաքներում, մանաւանդ Պետրօգրադում և Մօսկվայում, վերջին ժամանակ ամբոխը, պրոպագանդայի ազդեցութեան տակ, պաշարում էր պետական բանկը և թղթադրամը հնչիւն դրամի վերածում։ Այժմ, մայրաքաղաքների լրագիրների ասելով, հասարակութեան այդ հոգեբանութիւնը համարեա զրոյի է հաւասարվել։

◆ Կիէվի կոնսէրվատորիան ժամանակաւորապէս փոխադրվում է Ռոստով Դ./Վ.։ Բարձր կրթարաններում զբաղմունքները յետաձգվում են։

◆ Պետական Դուման ստանում է բազմաթիւ որոշումներ քաղաքներից, զեմստվօներից, միութիւններից, թէ անհրաժեշտ է վերակազմել պետական իշխանութիւնը։

◆ Ռիգայի պոլիտեխնիկումը փոխադրվում է Մօսկվա. Թիֆլիսի միջնորդութիւնը մերժվեց։

◆ «Н. В.»-ն խօսելով Բարձրագոյն հրովարտակի մասին յանուն Մօսկվայի քաղաքագլխի, գրում է. «Մօսկվայի արտայայտած ցանկութիւնները ամբողջ ռուս ժողովրդի անունից հասան Ցարին։ Կայսրը գնահատեց դրանք և տուեց Իր Արքայական պատասխանը։ Արքայական խօսքին կը հետեւէ գործ։ Կառավարութիւնը եղել է և կը լինի Կայսերական, բայց բաղկացած կը լինի այն մարդկանցից, որոնց մասին խնդրում է Մօսկվան Կայսրին ամբողջ ռուս ժողովրդի կողմից։ Ցարը շրջապատված կը լինի Իր ժողովրդի մարդկանցով։ Կայսրի կամքը կը լինի ժողովրդի կամքը։ Ժողովրդի կամքը կը լինի Կայսրի կամքը»։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ Գօրեմըկինը շուտով պաշտօնից հեռանալու է։ Պրեմիէր նշանակելը կորոշվի օգոստոսի վերջին։

◆ «Սև բլոկի» լիդէրներ Դուրնօվօն և Մարկովը եռանդով ագիտացիա են մղում առաջադէմ բլոկի դէմ և պահանջում են արձակել Դուման մինչև հոկտ. 15-ը։ Սակայն թէ Պետական Խորհրդի և թէ Դումայի մեծամասնութիւնը դէմ է Դումայի նստաշրջանն ընդհատելուն։ Լեհական կոլօն ևս մտաւ առաջադէմ բլոկի մէջ։ Մինչև այժմ բլոկը բաղկացած է 315 պատգամաւորից ընդհանուր 442 թւից։ Ծրագրի մշակմանը մասնակցեցին Սավէնկօն և Միլիւկովը։

◆ «П. К.»-ը հաղորդում է, որ Գուչկովին առաջարկվեց առեւտրի մինիստրի պաշտօնը։ Գուչկովը յայտնեց, թէ կընդունէ առաջարկութիւնը, երբ ազատութիւն կը ստանայ ընտրելու իր գործակիցներին։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Առաջիկայ 1915/6 թ.թ. թատրոնական սէզօնում Արտիստիկ Ընկ. թատրոնում տրվելու են ռուսական դրամատիքական ներկայացումներ Թիֆլիսի թատրոնասէր հասարակութեանը ծանօթ Տուգանովի ղեկավարութեամբ։

◆ Արքունական թատրոնում ներկայացումներ է տալու դարձեալ Եւլախովի օպերային խումբը։

◆ Հայ դերասանները շարունակում են խորհրդակցել թատրոնական սէզօնում պարբերական ներկայացումներ կազմակերպելու մասին. ըստ երեւոյթին՝ գործը գլուխ է գալու, թէև կայ մի հոսանք, որ նկատի առնելով ներկայ ողբալի դրութիւնը՝ դէմ է որեւէ հայկական ներկայացման։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տաքախմելա, 21 օգոստոսի

Մեծապատիւ պ. Տիգրան Նազարեանցի հայ փախստականների համար բացած ճաշարանի օգտին ուղարկում եմ իմ աղքատիկ քսակից 5 ր. խոնարհաբար խնդրելով հասցնել ում հարկն է։

Մեզնում, հայերիս մէջ, ընդհանրապէս մեծապատիւ պատուաւոր տիտղոսը տրվում է անխտիր բոլոր հարուստ վաճառականներին, մինչեւ այդ մեծ պատիւը պէտք է տրուէր ոչ թէ անխտիր դրամատէր ոսկէ հորթերին, այլ իսկապէս՝ պ. Տիգրան Նազարեանի պէս՝ անզուգական ազգասէրներին և ազնիւ հայրենասէրներին։

Ղեւոնդ ա. ք. Աթանասեան

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 5 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւանդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—143

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՈՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
Օ. ՕՐԲԵԼԵԱՆՑԻ
72-րդ տարի
Ընդունվում և պատրաստվում են աշակերտ-աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ընդունելութիւնը ամսիս 25-ից, իսկ պարապմունքները սեպտեմբերի 2-ից։
Լերմոնտովսկայա փողոց № 2.
(օ.մ.) 583. 3—2

Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ռեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, ռեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒԻ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԶՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ակնոցի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գրքերը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երկու հետեւեալ գրքերը. 1) «Նիկկարմատի չալվարը» ծիծաղաշարժ փոքրիկ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէքէտով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(հ.կ.) 311. 100—33

174. 0—45
ПРИ ГОНОРРЕѢ
въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ
„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА
для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.
ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.
(հ. կ.)

Առեւտրից բոլորովին անկախ պատճառներով
◆ ԾԱԽՎՈՒՄ Է ◆
մանրավաճառի
ՄԻ ԽԱՆՈՒԹ
գնել փափագողներին խնդրվում է դիմել՝ Некрасовская ул. № 3, магазинъ „Реномэ", около пом. Воронцову.
572. 4—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ԾԱԽՎՈՒՄ Է ՆԱՐՆՋԱԳՈՅՆ ԳԻՐՔ—բարենորոգումները Հայաստանում. (Оранжевая книга.—Реформы въ Арменіи). Լիակատար թարգմանութիւն ռուսերէնից և ֆրանսերէնից Ս. Աւագեանի։ Դիմել Կովկասեան բոլոր գրավաճառանոցները և թարգմանչին՝ Թիֆլիս, Норашенская ул. № 12.
(հ.կ.) 507. 10—9

ԴԱՍԱԳՐՔԵՐ
ԳՐԻԳՈՐԻՍ ԱՒ.-ՔԱՀ. ԵՐԶԿԵԱՆՑԻ

«Թուաբանական խնդիրներ», ըստ Գոլդենբէրգի, 9 տպ, I և II տարի	30 կ.
Նոյներ » » 5 III և IV »	35 կ.
«Տարրական ընդհանուր աշխարհագրութիւն»	60 կ.
«Քրիստոնէական Աստուածպաշտութիւն», պատկերազարդ, Բ. տպ.	50 կ.
«Քրիստոնէական բարոյագիտութիւն», Բ. տպ.	50 կ.
(Գիմնազիօնների և հոգեւոր դպրոցների համար)։	
«Պատմութիւն մանկավարժութեան»	1 ր.

Վաճառվում են բոլոր գրախանութներում։
Հեղինակից 10-ից աւելի գնողներին 30% զեղչ (II муж. гимназія).
590. 4—1

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլօվսկի պր., № 24, հեռ. № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։
(կ. ե. հ.) 480. 0—18

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՅՈՎՀ. Ա.-Ք. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԵՒ ԳԻՒՏ Ա.-Ք. ԱՂԱՆԵԱՆԻ
1. Հայոց եկեղեցու աստուածպաշտութեան համառօտ դասագիրք, պատկերազարդ, պետական, քաղաքային և ծխական դպրոցների համար։ ◆ Գինն է 20 կոպէկ։ ◆
2. Կրօնի դասեր, առաջին տարի, պատկերազարդ, ծխական, քաղաքային և պետական դպրոցների համար։ ◆ Գինն է 20 կ.։ ◆
Գումարով գնողին 25% զեղչ։
Մամուլի տակ են ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ երկրորդ և երրորդ տարիները։
Դիմել հեղինակներին և բոլոր գրավաճառանոցներին։
(ե. հ.) 567. 3—3

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող
Հաշւապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ
Թիֆլիս, Նիկօլայէվսկայա փող., № 36,
Նոյն տեղը ՊԱՆՍԻՈՆ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ
Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիօնով, դասերի պատրաստութեամբ և առանց
Խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։
(ե. հ. շ. կ.) 541. 50—9

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆենիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(հ.կ.) 551. 150—126

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.